ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3- Ն- 8876

«22» հոկտեմբերի 2021թ.

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ Ս. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ,
«Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ ՏՆՕՐԵՆ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ,
«ՍՈՒՐԱՉ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԲԱՐԵՅԱՆԻՆ,
«ԼԻՄՈՒՇ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

Սույնով տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են Հավելվածներ 1.2 և 1.3-ը, «Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ կողմից ներկայացված հայտի Հավելված 1.2-ը լրացված է ճիշտ բացառությամբ՝ 4.5-ի ա), 4.5.1, 4.7.1, 4.7.2 կետերի, «ՍՈՒՐԱՉ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.2-ում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը, «ԼԻՄՈՒՇ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ-Ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում ՍՊԸ-ի անվանումը լրացված չի ռուսերեն լեզվով և Հավելված 1.2-ը լրացված է ճիշտ բացառությամբ՝ 4.5-ի ա) կետի:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ առաջարկվում է Ձեզ մինչև սույն թվականի հոկտեմբերի 25-ը ներառյալ շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտերը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/26 ծածկագրով
գնումը համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-788, 511-792